ՀԱՆՐԱԳԻՐ 12/22

Ներկայացվող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը՝

Արդարադատության նախարարություն

Պաշտոնատար անձի անունը և ազգանունը՝

Կարեն Անդրեասյան

Ոլորտ՝

Արդարադատություն

Հանրագրի վերնագիրը՝

E-DRAFT.AM ԿԱՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկը՝

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում նոր իրավական ակտի տեղադրման դեպքում ապահովել բաժանորդագրված օգտատերերին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցման առաքումը:

Հիմնավորումը՝

e-draft.am կայքը հանդիսանում էլեկտրոնային մասնակցության արդի գործիք, վերջինիս միջոցով օգտատերերը հնարավորություն ունեն ակտիվորեն մասնակցել իրավաստեղծ գործունեությանը: Կայքը բաժանորդագրության հնարարություն ունի, որի դեպքում քաղաքացին մինչև վերջերս ծանուցվում էր կայքում տեղադրված նոր իրավական ակտի նախագծի մասին: Սակայն այս պահին իրավաստեղծ մարմնի կողմից նոր իրավական ակտի տեղադրման դեպքում բաժանորդագրված օգտատերը չի ծանուցվում: Մինչդեռ կան կայքի բաժանորդ օգտատերեր, որոնք աշխատում են որոշակի ոլորտում և իրենց համար առանցքային նշանակություն ունի լավատեղյակ լինելը իրականացվող իրավական փոփոխությունների վերաբերյալ: Բացի դրանից ոլորտային հասարակական կազմակերպությունները, ծանուցվելով իրենց ոլորտի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, հնարավորություն կունենան ավկտիվ մասնակցել իրավաստեղծ գործունեությանը: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք շտկել խափանումը և կայքի միջոցով ապահովել նոր իրավական ակտի տեղադրման դեպքում բաժանորդագրված օգտատերերի ծանուցումը էլեկտրոնային փոստի միջոցով:

Կից նյութեր՝

-

Հանրագրի գլխավոր նախաձեռնող՝

ՄԵՐԻ ՇԵՐՈՅԱՆ

Հասցե՝ Շիրվանզադե 4/1

Էլ փոստ՝ meri.sheroyan@gmail.com

Հեռախոսահամար՝

Digitally signed by SHEROYAN MERI 8110920519
Date: 2022.05.24 16:31:15 AMT